բերդի ավերակները նախկին Սյունի բերդի մնացորդներն են[25], Որոտան բերդի ավերակները գտնվում են Լորաձորի գետաբերանի և Վաղուդի գյուղի միջև, Որոտան գետի աջ ափին[26], Եթե նկատի ունենանք Օրբելյանի կողմից թվարկված բերդերի հաջորդականությունը, սկսած Որոտան բերդից, ապա Դավութլուի բերդը կհամապատասխանի Բորոտանին, Գյավուր դալասին՝ Բղենին, իսկ այդ երրորդ ամրությունը՝ Բարկուշատ բերդին։

Այսպիսով, Բղեն բերդի տեղորոշմամբ հայտնի է դառնում նաև Սյունյաց երկու նշանավոր այլ բերդերի՝ Բորոտանի և Բարկուշատի տեղադրությունը։ Քանի որ այս բերդերը իրենց անունները ստացել են համանուն գյուղերից, ապա այս բերդերի տեղորոշմամբ լուծվում է նաև համանուն գյուղերի տեղադրության հարցը։ Բորոտան գյուղը այդ դեպքում պետք է համապատասխանի Դավութլու գյուղին, քանի որ վերջինս անհամեմատ ավելի մոտ է բերդին, քան մյուս բնակավայրերը։ Բղենը պետք է գտնվելիս լիներ Գյավուր դալասի հարավ-արևելյան մասում, ուր նշմարվում են գյուղատեղի հետքեր, Բարկուշատը՝ Մամար գյուղի հարավ-արևելյան մասում, բերդին կից, քանի որ Մամար գյուղը, ժամանակի ընթացքում ընդարձակվելով, իր սահմանների մեջ է ընդգրկել բերդատեղին և գյուղատեղը։

Ա. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԴՎԻՆԻ ՍՏՈՐԻՆ ԲԵՐԴՈՒՄ 1975 Թ.

Մեծավաստակ գիտնական Կ. Գ. Ղաֆադարյանը, Դվին հնավայրն ուսումնասիրելիս, նրա կարևոր տեղամասերից մեկը, որն ընդգրկում է միջնաբերդի լանջերը, պայմանականորեն անվանել էր Ստորին բերդ[1]։ Պեղումների առաջին տարիներին այնտեղ կատարվեցին հետախուզական որոշ աշխատանքներ, որոնք հետաքրքիր նյութեր տվեցին քաղաքի ուշ շրջանի սոցիալ-տնտեսական կյանքը և քաղաքաշինության մի շարք հարցերը պարզաբանելու համար։

1975 թ. Ստորին բերդի արևմտյան լանջում բացվեց մոտ 100 քառ. մ մակերեսով միջնադարյան բնակելի ոչ մեծ մի շինություն, որը բաղկացած էր նեղ միջանցքներով միմյանց հաղորդակից 8 տարբեր չափերի սենյակներից (նկ. 1)։

Տասնամյակների ընթացքում բնական աղետների ու թշնամու գործած ավերածությունների պատճառով շինությունը, ինչպես երևում է, քանիցս վերանորոգվել է, քանի որ պատերի համաչափությունները բավականաչափ խախտված էին (սենյակներից մեկի 5 մ երկարություն ունեցող պատը կտրվածքում շարված էր 40 սմ աղյուսով, 35 սմ քարով, իսկ 1 մ 17 սմ լայնությամբ պատը շարված էր 68 սմ աղյուսով և 68 սմ քարով և այլն) և կառույցը կորցրել էր նախնական տեսքը։

Շինության արևմտյան մասի փողոցին[2] նայող սենյակներից մեկում բացվեց մշակված քարերով շարված շքամուտքը (1 մ 20 սմ բացվածքով), առջևում տեղադրված 58 սմ երկարությամբ մի մեծ սալաքարի մնացորդով։ Ներքուստ կառույցը հարդարելու նպատակով գործ են ածել տեղում գտնված կաղապարի մեջ պատրաստված գաջե զարդեր, գույնզգույն խճաքարեր կամ ձևավոր աղյուսի երկրաչափական տարբեր զարդանախշեր։ Հետաքրքիր ձևավորում ուներ գիպսի մեջ աղյուսներով շարված մեծ դանգվածը. թրծած աղյուսները աստղաձև դասավորելու միջոցով ստեղծել են երկրաչափական մի համաչափ պատկեր։ Անկասկած այդ



Նկ. 1

25 Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 140։

26 Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 206։

1 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 24։

2 1974 թ., նախքան հիշյալ շինության բացվելը, նյութական մշակույթի մնացորդներից զուրկ այս տարածությունը պայմանականորեն անվանել էինք փողոց։ 1975 թ. պեղումները հաստատեցին այս ենթադրությունը։

նպատակով կենտրոնական թաղամասի շինությունների ավերակներից բերվել և պատի մեջ են ագուցվել նաև քանդակազարդ գեղեցիկ տուֆե քարերը։

Շենքի յուրաքանչյուր բաժանմունքում տեղադրված էին զգալի թվով մեծ և փոքր թոնիրներ, որոնց տրամագիծը 80 սմ—1 մ էր։ Դրանք մեծ մասամբ լցված էին մոխրի հաստ շերտով, ընտանի կենդանիների ոսկորներով ու խոհանոցային նշանակություն ունեցող խեցեղեն առարկաներով։ Սենյակներում տնտեսական տարբեր նպատակներով փորվել են նաև հորեր, որոնք լցված էին հնագիտական ոչ միատարր նյութերով։

Գտնված ողջ նյութի քննությունը հնարավորություն է ընձեռում որոշակի պատկերացում կազմել Դվին քաղաքի բնակչության զբաղմունքի, կենցաղի, բնակարանի ներքին կահավորանքի, տնտեսական, պահեստային և առօրյա գործածության առարկաների մասին։ Հայտնաբերված նյութի մեջ մասսայական բնույթ է կրում հասարակ և ջնարակած խեցեղենը, քիչ չեն և մետաղե գործածության տարբեր առարկաները, գիպսե, աղյուսե, քարե հարդարանքի այլազան մասերը, գրամները։ Այս հարուստ ժողովածուի մեջ չնչին տոկոս են կազմում միայն զարդերը և ապակե իրերը։

Հասարակ խեցեղենը հիմնականում խոհանոցային է և ի հայտ է գալիս անոթների մեծ բազմազանությամբ (կժեր, փարչեր, կճուճներ, կարասներ, քրեղաններ, սափորներ, սնդկամաններ և այլն)։

Դվինի բնակիչների կենցաղում լայն գործածություն են ունեցել կժերը և սափորները։ Նրանք այս տիպի կարասին շատ են սիրել ու աշխատել են հնարավորին չափ գեղեցիկ ձևավորել ու հարդարել տարբեր եղանակներով։ Դրոշմազարդ է Ստորին բերդից գտնված սափորը, որը պատրաստված է մանրահատիկ դեղնավուն կավից, ունի կիսագնդաձև հղկված իրան, իսկ կոկիկ կանթը մի կողմից տեղադրված է պարանոցի մեջտեղում և մյուս ծայրով հենվում է իրանի վրա (աղ. I, 1)։ Պարանոցից ցած նշաձև հարուստ զարդերից բաղկացած ժապավենը ամբողջացնում է անոթի արտաքին գեղեցկությունը։ Նշաձև զարդերի տարբերակները միջնադարյան Հայաստանի XII—XIII դդ. մշակույթին շատ բնորոշ էին ու կիրառական արվեստի տարբեր բնագավառներում լայն տարածում ունեին։

Արտաքին ձևավորումով և զարդերի բովանդակությամբ հար և նման սափորներ հայտնի են նաև Փայտակարանի XII—XIII դդ. շերտերից[3]։

Հայտնաբերված սափորներից մեկ ուրիշը (2683/35) բարձր, ուղղաձիգ պարանոցով է, կիսագնդաձև իրանով ու լայն հատակով (աղ. I, 2)։

Միջնադարյան հնավայրերում հազվագյուտ հանդիպող սափորներից մեկը ինքնատիպ է և անթերի է կատարված (աղ. I, 3)։ Անոթի դեպի վեր լայնացող պարանոցը թեք ուսերով միանում է դեպի հարթ հատակը իջնող իրանին։ Անհամեմատ կոպիտ ու մասսիվ է կանթը, որի ծայրերից մեկն ամրացված է անոթի պսակին և թեթև աղեղ կազմելով, ուղղահայաց դիրքով հենվում է իրանին։ Այս գեղեցիկ անոթն իր յուրատիպ կերտվածքով բազմաթիվ զուգահեռներ ունի XII—XIII դդ. մետաղե սափորների օրինակներում[4]։ Սա ապացույց է այն բանի, որ մետաղե և կավե առարկաների ձևերը, երբեմն էլ զարդերը XII—XIII դդ. ոչ միայն փոխադարձաբար ազդում էին մեկը մյուսի վրա, այլև ընդօրինակվում էին։ Կճուճների զգալի մասը գտնվեց շինության թոնիրների մեջ, հաճախ էլ լցված ընտանի կենդանիների ոսկորներով, որը խոսում է այդ ամանների կիրառական կողմի մասին։ Իրենց արտաքին տեսքով և մշակմամբ կճուճները գրեթե միօրինակ են, եթե չհաշվենք, որ մի մասը կանթերով է, իսկ մյուս մասը անկանթ։ Կիսակլոր կանթերով կճուճներն ունեն մի քանի տարբերակներ։ Այնարերան կճուճներից մեկի (չափերը բարձր. 9,5 սմ, բերանի տր. 18 սմ, հատակի տր. 8 սմ) պսակը փոքր-ինչ դուրս փված է (աղ. I, 6), իսկ իրանը կիսակլոր անցումով թեքվում է դեպի հարթ հատակը։ Շուրթից ցած չուրջանակի անցնում են զույգ շարք ակոսավոր փորագիր գծեր։ Տափակ ու լայն կանթով է հարդարված բարձրադիր մեկ այլ կճուճ (չափերը տր. 15 սմ, բարձր. 17 սմ, հատակը 9 սմ, աղ. I, 5)։ Ուշագրավ է տանձաձև մեծ անոթը, որն ունի դուրս ծալված պսակ, կարճ պարանոց և տանձաձև իրան։ Պարանոցի եզրով անցնում է եղունգով արված զարդերով ուռուցիկ ու լայն մի գոտի (աղ. II, 1)։ Նկարագրված ձևի կճուճները լայն տարածում ունեին IX դարում, բայց քանի որ վերջինս հայտնաբերվել է լավ թվագրվող կոմպլեքսում, պիտի ենթադրել, որ վաղ ժամանակներից հայտնի ձևը հարատևել է մինչև XII—XIII դդ.։ Գեղեցիկ մշակում ունեն նաև գնդաձև իրանով փոքր չափերի անկանթ կճուճները (աղ. I, 4)։

---

[3] Г. М. Ахмедов, Неполивная керамика Оран-Калы IX—XIII вв. (по материалам раскопок 1953—55 гг.), МИА, 67, էջ 218, նկ. 4։

[4] Б. И. Маршак, Бронзовый кувшин из Самарканда (сб. «Средняя Азия и Иран»). Л., 1972, էջ 61—90։



Աղ. I

Ստորին բերդից հայտնաբերվեցին նաև երկու ամրողջական գրեթե միատեսակ քրեղաններ (2614/4, բարձր. 9,5 սմ, տր. 18 սմ, 2623/35, բարձր. 19 սմ, հատակը 7 սմ, աղ. II, 2, 3), որոնք ունեն հաստ պատեր, մեկի պսակն ուղիղ կտրվածք ունի, իսկ մյուսինը՝ քիչ դուրս ծալված է։

Խոհանոցային խեցեղենը ծածկել են համապատասխան կափարիչներով և խուփերով։ Յուրաքանչյուր տիպի անոթի համար միշտ էլ պատրաստել են հարմար խուփ։ Ստորին բերդից հայտնաբերված խուփերը բաժանվում են հետևյալ խմբերի. 1. կարասների խուփեր, 2. լայն պսակով մեծ կճուճների խուփեր, 3. նեղ պսակով անոթների խուփեր և կափարիչներ։ Խուփերի մի մասը ակավառակաձև է (աղ. II,



Աղ. II

4, 6, 7). Կենտրոնում ունի բարձր ակոսավոր կամ կլոր, քիչ փոս ընկած ցցուն բռնակ, իսկ եզրերին եղունգով արված են ակոսավոր կամ սանրաձև զարդեր։ Թերի վիճակում պահպանված խուփերից մեկը դրոշմազարդված է օձի, ծաղկի մի դեղեցիկ պատկերաշարքով։ Հիշյալ նախշերը դրոշմված են ոչ թե գանաձև կնիքներով, այլ վերադիր դաջերով, որի հետևանքով զարդերը փոված են ադատ վիճակում, խուփի երեսի տարբեր կետերում։ Սովորական խուփերից միանգամայն առանձնանում է սեղանաձև խուփը, որը մասսիվ է, պատրաստված է խոշորահատիկ կավից, իսկ թրծումը վատորակ է, որ երևում է խուփի կտրվածքից (աղ. II, 8, 2614/18, չափերը՝ 12×12,5 սմ), քառակող ուղղահայաց բռնակը ամրացված է մեջտեղում, ու միակ հարդարանքը հախճապակի փիրուզագույն ինկրուստացիան է։

Սովորաբար գինու, ցորենի և ալյուրի առատ պաշարների մի մասը Դվինում պահեստավորվել է կարասների մեջ։ Պատահական չէ, որ պեղումների ժամանակ գտնված կարասներից մեկը կիսով չափ լցված էր ցորենի հատիկներով։ Մեր տրամադրության տակ եղած կարասներից չորսը դրոշմազարդ են և ունեն սյուժետային հարուստ նկարագիր։ Այստեղ հանդիպում են կենդանիների և թռչունների պատկերներ այծեր, եղնիկներ, թռչուններ, որոնք իրարից բաժանվում են սանդղաձև զարդով կամ ոճավորված կենաց ծառերով։ Նույն սյուժեն յուրաքանչյուր 10—20 սմ պարբերությամբ կրկնվում է։ Կարասներից մեկ ուրիշը պարանոցից մինչև հատակը վարպետը զարդարել է երկրաչափական, միմյանց չկրկնող մի քանի գոտիներով՝ սուրանկյուն եռանկյուններով, ինչպես նաև ուղիղ և ալիքավոր փորագիր գծերով[5]։

Ուշագրավ են հայերեն գրեր կրող կարասի բեկորները (1975/71), որոնք դժբախտաբար, չամբողջացան։ Գտնված բեկորների վրա հնարավոր եղավ ընթերցել միայն ՈՒՐՋ և ԳՈՅ տառակապակցությունները (աղ. I, 7)։

Մեդկամանները, որոնք հասարակ խեցեղենի բաղկացուցիչ մասն են կազմում, թվով 4-ն են, ըստ որում, մեկը խոտանված է (աղ. II, 5)։ Արտաքուստ դրանք առանց նստուկի, հաստ պատերով և փոքր հերմետիկ պտուտակավոր բերանով ձվաձև անոթներ են։ Անցյալ տարիներին միջնաբերդից հայտնաբերված օրինակների համեմատությամբ վերջիններս առանձնանում են իրենց միատիպությամբ ու շատ պարզ զարդերով[6]։

Ընդհանրապես Դվինից հայտնաբերված խեցեղենի քննությունը ցույց է տվել, որ անգամ կատարյալ խեցանոթների վրա վարպետները զլացել են թողնել իրենց նշանները։ Ստորին բերդում այս սկզբունքից որոշակիորեն շեղվել են և իրենց իսկ պատրաստած հասարակ անոթների վրա արձանագրել են հետևյալ պայմանական նշանները X, ճ ՀՈ[ՎՍԵՓ], عبد ـــل և այլն։

Լուրջ ուշադրության է արժանի շինության միջից գտնված ջնարակած խեցեղենը, որը հանդես է գալիս XII—XIII դդ. համար բնորոշ ձևերով և զարդերի հետաքրքիր բովանդակությամբ։ Զարդերի միատիպությունը և բեկորների ու ձևերի առատությունը խոսում է տեղում ջնարակած խեցեղենի մասսայական արտադրության մասին։ Հանրահայտ է, որ Դվինի խեցեգործ վարպետները Մերձավոր Արևելքի խեցեգործության ընդհանուր սկզբունքների ու ճաշակի հետ միշտ էլ ընթացել են համաքայլ։ Տեղում մշակվել ու կիրառվել են ժամանակի հայտնի բոլոր հնարները՝ գծագրությունը, փորագրությունը, անգորը հեռացնելու միջոցով ցանկալի զարդն ստանալու եղանակը և այլն։ Անգորի ծածկույթով պատած առարկաների վրա հաճախ խեցեգործները վերարտադրել են երկրաչափական բնույթի հարուստ զարդեր՝ հավասարակողմ խաչեր, աստղաձև զարդեր՝ եռանկյուններ, հավասարակողմ եռանկյուններով կազմվող շրջանակ և այլն (աղ. III, 4, 7)։ Այսպիսի զարդերը Դվինի և Անիի խեցեգործների գեղարվեստական մտահղացման արգասիքն են և շատ են հանդիպում XII—XIII դդ. խեցեղեն առարկաների վրա[7]։ Ջնարակած անոթներից մեկի հատակը ներսից զարդարված է մի գեղեցիկ վարդյակով, որի թերթերը մեկընդմեջ կանաչ ու նարնջագույն երանգներ ունեն (աղ. III, I), իսկ մեկ այլ թասի դաշտն զբաղեցնող արևածաղիկը ամփոփված է տերևազարդ օղակի մեջ (աղ. III, 2)։ Փորագրելու եղանակով, որին Դվինի վարպետները կատարյալ կերպով էին տիրապետում, հյուսածո մի գեղեցիկ շղթա է արված թասերից մեկի շրթնամասի եզրին (աղ. III, 6)։ Կ. Գ. Ղաֆադարյանը այսպիսի զարդեր կրող խեցեղենը թվագրում է XII—XIII դդ. և իրավացիորեն համեմատում է հայկական ճարտարապետական քանդակազարդերի հետ[8]։ Այսպիսի թվագրությանը կողմնակից է Ա. Լ. Յակոբսոնը[9]։

XIII դարի սկզբներին Մերձավոր Արևելքում ջնարակած խեցեղենի մասսայական արտադրության կազմակերպման համար մեծ խթան հան-

---

5 Կարասները պահվում են Դվինի հնագիտական բազայում։

6 Մեդկամանների կիրառական նշանակության մասին գոյություն ունի ընդարձակ, սակայն իրարամերժ կարծիքներով լեցուն գրականություն։ Նորերս պարզվեց, որ այդ անոթներն իրենց հրակայուն հատկություններով օգտագործվել են ալքիմիկոսների կողմից բարձր ջերմաստիճանի տակ քիմիական ռեակցիաներ իրագործելու համար։ Տե՛ս Абу-л Фазл-Хубайши Тифлиси. Описание ремесел (Байан ас—сана' а т), перевод с персидского, введение и комментарии Г. М. Михайлевич, М., 1976, էջ 23—24։

7 Б. А. Шелковников. Поливная керамика из города Ани. Ереван, 1957, նկ. 8, 9, 10, Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 215, նկ. 194։

8 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 213։

9 А. Л. Якобсон. Художественная керамика Байлакана (Орен-Кала). МИА, 67, էջ 252։



Աղ. III

դիսացավ էժանագին ներկանյութերի (հատկապես պղնձի օքսիդի և կորալտի) լայն գործածություն։ Դա նշանակում է, որ ջնարակած խեցեղենի արտադրության մեջ սկսվում էր մի նոր շրջան։ Վերջնարակային կամ ենթաջնարակային եղանակով, արտադրական պրոցեսների համեմատական պարզությամբ, էժանությամբ վարպետն ստանում էր գեղարվեստական պատշաճ ճաշակով ձևավորված առարկաներ։ Պղնձի օքսիդի խառնուրդով ներկված անոթները թրծումից հետո ձեռք էին բերում փիրուզյա հաճելի երանգ, որը ժամանակի սիրված գույներից էր ու շուկայական լայն պահանջարկ էր վայելում։

Դվինը, որ Մերձավոր Արևելքի կարևոր օղակներից մեկն էր, միջազգային շուկայում գրավում էր իր պատվավոր տեղը և, բնականաբար, չէր կարող հաղորդակից չլինել խեցեգործության գաղտնիքներին։ Ստորին բերդից հայտնաբերվել են փիրուզյա մուգ երանգով ջնարակած չորս անոթներ՝ ամբողջական մի սկուտեղ, մեծ թասի բեկոր, խուփի բեկոր ու մի ձիթաճրագ, որը խոտանված է։ Թասի բեկորի վրա հազիվ նշմարելի կոբալտի երանգով գծագրել են վարդյակի մի գեղեցիկ պատկեր և ապա թաթախել պղնձի օքսիդի լուծույթի մեջ։ Նույն եղանակով է հարդարված սկուտեղը (2588/1, բարձր. 10 սմ, տր. 26 սմ, հատակը 8 սմ), որն ունի ուղիղ կտրված պսակ, ուղղաձիգ կողեր, որոնք միանգամից թեքվում են դեպի հատակը։ Ներքուստ հիմնական զարդը շեղանկյունիների մեջ պարփակված հավասարաթև խաչերն են։

Քաղաքի կործանումից հետո (1236 թ.) այս կարգի խեցեղենի արտադրությունը, ինչպես երևում է, չընդհատվեց, այլ շարունակվեց Անիում, Գառնիում ու նոր պայմաններում տվեց խեցեղեն արվեստի նոր ու ավելի կատարյալ նմուշներ[10]։

Ջնարակած խեցեղենի համեմատությամբ Ստորին բերդում հախճապակին գործածության սահմանափակ շրջանակ է ունեցել։ Միակ արժեքավոր առարկան կարելի է համարել հախճապակե ալեբաստրոն կճուճը (բարձր. 22 սմ, բերանի տր. 11 սմ, հատակի տր. 10 սմ, աղ. III, 3), որը հայտնաբերվեց շինության արևմտյան սենյակներից մեկի հորից։ Անոթի քիչ դուրս ծալված կարճ պսակը անմիջապես միանում է իրանին, հատակը հարթ է ու տափակ։ Մինչև ջնարակելը անոթի իրանը ձևավորել են նիստավոր կողերով և ապա ընկղմել են կոբալտի օքսիդի լուծույթի մեջ։

Այսպիսի կերտվածքով հախճապակյա շողուն կճուճներն Իրանում[11], Անիում[12], Դվինում[13] հայտնաբերվել են XIII դարի կոմպլեքսներում, իսկ Խերսոնեսում՝ XIV դարի շերտերում[14]։

Ստորին բերդից գտնված մետաղե առարկաները թեև քանակով մեծ չեն, բայց թե՛ գործածությամբ և թե՛ ձևերով բազմազան են, մի հանգամանք, որ խոսում է կենցաղում երկաթի լայն տարածում և գործածություն ունենալու մասին։ Կան տարբեր ձևերի ու չափերի գամեր, թոնիրների հարմարանքներ, կողպեքի օղեր, դանակի շեղբեր, նետասլաքներ, մանկական բրոնզե մատանի, մի կշռաթաս և նույնիսկ երկաթի խոտանի մի մեծ զանգված, որն ապացույց է մատակայքում ինչ-որ դարբնոցի գոյության մասին։

Երկաթից պատրաստված նետասլաքներն ունեն շեղանկյան տեսք, իսկ երկար պոչուկը, սովորաբար բուն մարմնից բաժանված է մի ուռուցիկ գոտիով։ Նետասլաքների այսպիսի օրինակներ գտնվել են նաև Գառնիում[15], իսկ Միջին Ասիայում[16] դրանք հայտնի են մոնղոլական ժամանակաշրջանով ստույգ թվագրվող շերտերում (XIII—XIV դդ.)։

Թերևս ճիշտ է Գ. Ա. Պուգաչենկովան, որը շեղանկյուն տափակ նետասլաքների հանդես գալը XIII դարում բացատրում է զուտ տեխնիկական դրդապատճառներով[17] (համեմատաբար քիչ հումքի պահանջ և պատրաստման ոչ մեծ հմտություն)։ Շատ կարևոր է նույն հատվածից հայտնաբերված ջնարակած խեցանոթի բեկորը, որի վրա փորագրման եղանակով շեղանկյունաձև նետասլաքների ամբողջական փունջը պատկերված է նեղ կամարների շրջանակներում (աղ. III, 5)։ Այս փաստը հաստատում է շեղանկյուն նետասլաքների գործածության ժամանակը (XIII դար) և պարզում խեցեղենի զարդերի ու մետաղե առարկաների ձևերի ընդհանրությունները։

Դվինի բնակչության այս խավի համար ապակին, ըստ երևույթին, շքեղություն էր։ Պատա-

---

10 Տե՛ս Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի. 1949—1956 թթ. պեղումների արդյունքները (միջին դարեր), Երևան, 1962, էջ 92—97։ Ա. Ժամկոչյան, Հայաստանի XIII դարի վերջի և XIV դարի հախճապակին, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1։

11 SPA V, էջ 644, նկ. B; H. Wallis Notes on some early persian lustre vases, London, 1855, նկ. I; H. wallis, Typical examples, of Persian and Oriental ceramic Art, London, 1893, vol. I, աղ. IV։

12 А. Л. Якобсон, Средневековый Херсонес XII—XIV вв., МИА, 17, էջ 217։

13 ՀՊՊԹ, № 2121/12 (չափերն են՝ տր. 10 սմ, բարձր. 22 սմ)։

14 А. Л. Якобсон, Средневековый Херсонес..., էջ 217։

15 Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 52։

16 А. Н. Бернштам, Историко-культурное прошлое Северной Киргизии, сб. «Большой Чуйский канал», Фрунзе, 1943, էջ 18; նույնի՝ Чуйская долина. МИА 14, М., 1950, աղ. XCI.

17 Г. А. Пугаченкова, Погребение монгольского времени в Халчаяне, СА, 1967, № 2, էջ 154։

հական չէ, որ այսքան բազմազան նյութերի մեջ ապակին աննշան տոկոս է կազմում (ապարանջանի բեկորներ, սրվակի մասեր)։ Ամբողջական է մի կողմից ուռուցիկ, մյուս կողմից՝ հարթ մակերեսով կանաչավուն երանգի ապակե կնիքը, որը ունի արաբատառ մակագրություն. عمل الصيادق [ابن علي («Գործ Աս-Սադեկ Իբն Ալիի», նկ. 2, 2588/75, տր. 11 սմ, բարձր. 5 սմ)։



Նկ. 2

Հայտնի է, որ Բյուզանդական կայսրության սահմաններում[18] լայն տարածում են ունեցել ապակուց պատրաստված նույնատիպ առարկաներ (էկզակիներ), որոնք պատկերագրական առումով շատ հետաքրքիր են (Թագավորի կերպարանք, հունատառ արձանագրություն և խաչի պատկերներ)։ Ուսումնասիրողները պարզել են, որ դրանք ծառայել են իբրև բյուզանդական ոսկե դրամների կշռաչափեր[19]։

Ստորին բերդից հայտնաբերված արաբատառ ապակե վերոհիշյալ կնիքը մեր կարծիքով կիրառական այլ նշանակություն է ունեցել։ Հնարավոր է, որ Աս-Սադեկ Իբն Ալին եղել է խեցեգործ մի վարպետ, որը փորձել է իր անունը հավերժացնել խեցանոթների վրա այնպես, ինչպես դա արվում էր Փայտակարանում։

Միջնադարյան Հայաստանում գործող դրամական միավորների գյուտերը շատ կարևոր են պատմա-մշակութային հարցերը պարզելու, ինչպես նաև առևտրական հարաբերությունների բնույթը ճշտելու համար։ Դրամները միաժամանակ հնագիտական շերտը թվագրող կարևոր նյութ են հանդիսանում։ Պեղված շինության մեջ գտնվեցին հատուկենտ դրամներ և 43 պղնձե դրամներից բաղկացած գանձ, որը հիմնավորում է շերտի ժամանակագրական պատկերը։ Նյութի ուսումնասիրությունից պարզվում է, որ Ստորին բերդում շրջանառության ոլորտում հիմնականում գործել են XII—XIII դդ. վրացական և էլտկուզյան դրամները. վրաց Թամար Թագուհու և Դավիթ Շինարարի 1200 թ. (420 թ. բրոնիկոնի), էլտկուզյան Աթաբեկ Սուլթան Արսլանի (1136—1172), Կիզիլ-Արսլանի և Սուլթան Սինջար Իբն Սուլեյմանի (1186—1191) մակագրությամբ դրամները։ Ամենաուշ կտրված դրամը պատկանում է էլտկուզյան աթաբեկ Աբու Բեքրին և կրում է 1191—1210 թթ.[20]։

Ուրեմն Ստորին բերդի այս հատվածում շուրջ մեկ դար բնակչությունն ապրել է աշխույժ կյանքով, ընդհուպ մինչև մոնղոլների կողմից քաղաքի հիմնահատակ կործանումը (1236 թ.)։ Նրանց տնտեսական զբաղմունքի մասին կարող ենք ասել հետևյալը. տեղում հայտնաբերվեցին խեցեղեն, անոթների արտադրական խոտան (սնդկաման, ջնարակած անոթ), անգորի մի խոշոր գանգված, որը ջնարակած խեցեղենի արտադրության կարևոր հումքերից մեկն է, սուր եզրերով օժտված եռանկյունաձև քարե գործիքներ, որոնք ամենայն հավանականությամբ գործ են ածվել ջնարակած խեցանոթների զարդերը գծագրելու համար (աղ. I, 8), իսկ հարևան քառակուսիներում պեղվեցին միջին չափերի կավանոթների թրծման հնոցներ։ Նյութական մշակույթի այս մնացորդները ապացուցում են, որ տեղի բնակչության եթե ոչ միակ, ապա հիմնական զբաղմունքներից մեկն է եղել խեցեգործությունը։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ Դվինի Ստորին բերդի սույն հատվածը ժամանակին քաղաքի խիտ բնակեցված արհեստավորական թաղամասերից մեկն էր, ուր նախքան քաղաքի կործանումը մոտ մեկ հարյուրամյակ (XII դարի կես—XIII դարի կես) ապրում էր սոցիալապես միջակ կարողությունների տեր մի խավ՝ իրեն վայել համեստ կենցաղով։

Ա. ԺԱՄԿՈՉՅԱՆ

[18] G. Schlumberger, Poids de verre étalons monetiformes d'origine byzantine, REG, VIII, 1895.

[19] В. В. Кропоткин. Византийский экзакий из Керчи. «Византийский временник», 34, М., 1973, էջ 262։

[20] Դրամների որոշումը կատարված է պատմական գիտությունների դոկտոր, դրամագետ Խ. Ա. Մուշեղյանի կողմից։